

A 19.00.05
U - 88

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Խ. ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՍՏԵՓԱՆՅԱՆ ՆԱՐԻՆԵ ԵՂԻՇԵԻ

ՓՈԽԱՐԻՆՈՂ ԸՆՏԱՆԻՔԻ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԵՅՈՒԹՅՈՒՆԸ ԴԵՊՐԻՎԱՅՎԱԾ
ԵՐԵՒԱՆԵՐԻ ՎՐԱ /ՍՕՍ ԸՆՏԱՆԻՔԻ ՄՈԴԵԼ/

ԺԹ. 00. 05 «Տարիքային և մանկավարժական հոգեբանություն»
մասնագիտությամբ հոգեբանական գիտությունների թեկնածուի
գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ 2007

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում

Գիտական ղեկավար՝

Հոգեբանական գիտությունների թեկնածու, պրոֆեսոր՝ Է. Ա. Գրից

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

Հոգեբանական գիտությունների դոկտոր՝ Ս. Ջ. Արզումանյան

Հոգեբանական գիտությունների թեկնածու՝ Ա. Ս. Բերբերյան

Առաջատար կազմակերպություն՝


Վ. Բոյառովի անվան պետական լեզվաբանական համալսարան

Պաշտպանությունը կայանալու է 2007թ. մարտի 15-ին, ժամը 14⁰⁰-ին Խ.Արովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանին առընթեր գիտական աստիճաններ շնորհող 020 մասնագիտական խորհրդի նիստում:

Հասցեն՝ 375010, Երևան, Տիգրան Մեծի 17:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Խ.Արովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2007թ. փետրվարի 13 -ին:

Մասնագիտական խորհրդի գիտ. քարտուղար, հոգեբանական գիտությունների թեկնածու՝  Ա. Ս. Հովհաննիսյան



Աշխատանքի ընդհանուր բնութագիրը

Թեմայի արդիականությունը: Յուրաքանչյուր հասարակությունում և ցանկացած ժամանակաշրջանում լինում են երեխաներ, որոնց ծնողները չեն կարողանում ինչ-ինչ պատճառներով խնամել նրանց: Նման պարագայում հասարակության խնդիրն է ստանձնել այդպիսի երեխաների դաստիարակությունն ու խնամքը: Դեպրիվացիան կարևոր կենսական պահանջմունքների տևական թերբավարարումն է: Խոսքը գնում է ոչ թե ֆիզիկական, այլ հոգեկան պահանջմունքների գրկվածության մասին: Նման վիճակ առաջանում է, երբ երեխան գրկված է լինում ծնողական սիրոց, փայփայանքից, հոգատարությունից: Դեպրիվացիա տերմինը օգտագործվում է լայն իմաստով: Այն օգտագործվում է և՛ սոցիալական, և՛ կենսաբանական գիտություններում և, իհարկե, հոգեբանության մեջ, ինչը ուսումնասիրում է հիմնականում կենսաբանականի ու սոցիալականի համակցությունը անձի մեջ: Տերմինը ծագել է լատիներեն deprivatio բառից (զրկում, կորուստ), որը գործածության մեջ է դրվել միջնադարում՝ սկզբում եկեղեցականների շրջանում, որը նշանակել է զրկել հոգևորականին բենեֆիցիայից (եկամտաբեր աշխատանքից): Այն աստիճանաբար մտքը է գործել եվրոպական լեզուներ ու այժմ լայնորեն օգտագործվում է առօրյա խոսակցության մեջ: Գոյություն ունեն բազմաթիվ տեսություններ հոգեկան դեպրիվացիայի վերաբերյալ: Յ.Լանգմայերը և Ջ.Մատչեյկը (1984) առաջ են քաշել «բազմամակարդակ» տեսությունը հոգեկան դեպրիվացիայի վերաբերյալ, որը ներառում է իր մեջ բոլոր տեսությունները:

Ըստ նրանց դեպրիվացիայի մեղմացումը կարող է տեղի ունենալ, եթե շտկում կատարվի բոլոր՝ զգայական, կոգնիտիվ, հուզական, սոցիալական ոլորտներում: Մոր և երեխայի խաթարված փոխհարաբերությունների պատճառով առաջացած բացասական հետևանքները առաջին անգամ հիմնավորվել են օբյեկտային փոխհարաբերությունների տեսությունում, որը համարվում է ժամանակակից հոգեվերլուծության հեղինակավոր դպրոցներից մեկը: Այս տեսության հիմնադիրներն են Ռ.Ֆեյերբեյնը, Դ.Վինիկոտը(1952): Եվ Ռ. Ֆեյերբեյնը արտահայտել է այս ամբողջ միտքը աֆորիզմի ձևով: «Լիբիդոն փնտրում է ոչ թե բավարարում, այլ օբյեկտ»: Լիարժեք զարգացում կարող է լինել միայն մոր հետ հաղորդակցման ժամանակ. հակառակ դեպքում, երեխան ամեն մի նորությունից վախ և անհանգստություն է ապրում:

Աշխարհը ճանաչելու ակտիվությունը երեխաների մոտ հիմնվում է մայրական սիրո զգացմունքի վրա: Իսկ եթե դա չի լինում, նրանք անտարբեր են լինում ամենքի նկատմամբ:

Հոգեկան դեպրիվացիայի հիմնախնդիրը բավականին խորն ուսումնասիրվել է տարբեր երկրներում, սակայն դրանց արդյունքների ուղղակի փոխառումը արդյունավետ չէ մի շարք պատճառներով:

Առաջին. հետազոտությունները կատարված են տարբեր տեսական հիմքերի վրա՝ նոր մեթոդաբանական ապարատի կիրառմամբ:

Երկրորդ. հոգեկան դեպրիվացիայի հիմնախնդրին նվիրված հետազոտությունների մեծ մասը անցկացվել է վաղ և նախադպրոցական տարիքի երեխաների հետ:

Երրորդ. համեմատական վերլուծությունը վկայում է, որ դրանց արդյունքները որոշվում են կոնկրետ սոցիալ-մշակութային պայմաններով, մասնավորապես, այս կամ այն երկրում կիրառվող դաստիարակության ավանդույթներով, մանկական հաստատությունների յուրահատկությամբ, քանակակազմով և մանկատների տեսակներով:

Մենք այդ իմաստով հետազոտել ենք ընտանեկան խնամքը փոխարինող ՍՕՍ ընտանիքի մոդելը: Այսօրվա դրությամբ ծնողազուրկ և ընտանիք չունեցող երեխաների խնամքի և դաստիարակության 2 տիպ գոյություն ունի՝ մանկատները և ՍՕՍ մանկական-գյուղ հաստատությունը: Երևույթը այժմեական է, քանի որ, ըստ էության, կա մոդելի կիրառման խնդիր:

Հետազոտության գիտական վարկածը.

Համաձայն աշխատանքային վարկածի, որը, անօրևան երեխաների դեպրիվացիայի պատճառների և շտկողական արդյունավետ աշխատանքի անհրաժեշտ բաղադրամաս է հանդիսանում, հատկապես, այն գործոնների առանձնացումը, որոնք նպաստում են դեպրիվացիոն հետևանքների մեղմացմանը: Այդ գործոնները հաստատվում են փոխարինող ընտանիքների և մանկատների համակարգային հետազոտության և հոգեբանական վերլուծության, դրանց առանձնահատկությունների հաշվառման, փորձարարական տվյալների համադրության և ընդհանրացման միջոցով:

Հետազոտության նպատակն է բացահայտել և համադրել ընտանեկան խնամքին փոխարինող ձևերի միջանձնային փոխհարաբերությունների հոգեբանական առանձնահատկությունների ազդեցությունը երեխայի մոտ հոգեկան դեպրիվացիան մեղմացնելու գործընթացում:

Հետազոտության խնդիրներն են.

1. ՍՕՍ ընտանիքում բացահայտել այն հոգեբանական գործոնները, որոնք նպաստում են երեխայի մոտ դեպրիվացիայի մեղմացմանը:

2. Բացահայտել մանկատան պայմանների ազդեցությունը երեխայի մոտ դեպրիվացիայի դրսևորման գործընթացում:

3. Բացահայտել մանկատան և ՍՕՍ հաստատության սաների կյանքում տեղ գտած կարևորագույն պահերը, որոնք դառնում են երեխաների կյանքի իրադարձություններ, յուրացվում են նրանց կողմից և մտնում հոգեբանական փորձի մեջ:

4. Բացահայտել տագնապալիության մակարդակը ՍՕՍ մայրերի և դաստիարակների մոտ:

5. Հետազոտության արդյունքների հիման վրա մշակել գործնական հանձնարարականներ՝ դեպրիվացիայից առաջացած հետևանքների շտկման ուղղությամբ:

Հետազոտության օբյեկտը հանդիսանում են երեխաները, մեծահասակները և նրանց միջանձնային փոխհարաբերությունները:

Հետազոտության առարկան հանդիսանում է հոգեկան դեպրիվացիան մանկատան, ՍՕՍ գյուղի երեխաների մոտ:

Հետազոտության մեթոդաբանական հիմքը.

Ատենախոսության մեջ օգտագործվում են հոգեկան դեպրիվացիայի համաշխարհային փորձն ուսումնասիրող աշխատանքներ: Մեր դրույթները հիմնվում են մասնավորապես Ջ.Լանգմայերի, Ջ.Մատեյչեկի բազմամակարդակ տեսության, հոգեվերլուծության կողմնակից Ջ.Բոուլբիի, Լ.Պոժարի կողմից տրված հոգեկան դեպրիվացիայի հատկանիշների գիտական սահմանման վրա: Տեսական հիմքը համակարգային մոտեցումն է, ընտանիքի վերլուծության մոդելը, որի մեջ մտնում են ընտանիքի կառուցվածքը, մակրո և միկրո դինամիկան:

Հետազոտության գիտական նորույթը.

Հետազոտության գիտական նորույթն այն է, որ ՀՀ-ում մինչև այժմ չի ուսումնասիրվել հոգեկան դեպրիվացիան ծնողազուրկ, ընտանիք չունեցող երեխաների մոտ: Առաջին անգամ այս խնդրի համեմատական ուսումնասիրություն ենք կատարել ՍՕՍ-ում և մանկատներում: Բացահայտվել են այն հոգեբանական գործոնները, որոնք մեղմացնում են դեպրիվացիայից առաջացած հետևանքները:

Մեր աշխատանքն ուղղված է գոյություն ունեցող փորձի հարստացմանը և այդ նպատակով մեր կողմից առաջին անգամ գուգահեռներ են անցկացվել 2 մոդելների միջև, հետազոտվել են ՍՕՍ գյուղի սաների և ՍՕՍ մայրերի, մանկատան երեխաների և դաստիարակների հուզական ոլորտը, միջանձնային, ներընտանեկան փոխհարաբերությունները, դրանց ազդեցությունները դեպրիվացիայից առաջացած հետևանքների մեղմացման և շտկման հարցում:

Տեսական նշանակությունը:

Կատարված հետազոտությունները ընդլայնում են գիտական պատկերացումները հոգեկան դեպրիվացիայի և դրա հետևանքների մեղմացման վերաբերյալ:

Ստացված արդյունքները կարող են օգտագործվել փոխարինող ընտանիքի ինստիտուտի առավել հիմնարար հետազոտությունների անցկացման ընթացքում:

Քննարկելով դեպրիվացիայի և տարիքային զարգացման տեսությունները՝ կարևորվել են սոցիալական, մեթոդաբանական շրջապատի դերի և շփումների այն որակները, որոնք անհրաժեշտ են երեխայի լիարժեք հոգեկան զարգացման համար:

Աշխատանքում ընդգծվում է ընտանեկան խնամքի և հոգատարության անհրաժեշտությունը, ինչը նպաստում է երեխաների մոտ դեպրիվացիայից առաջացած հետևանքների մեղմացմանը:

Ընտանիքի համակարգային վերլուծությունը իրագործվել է հետևյալ ասպեկտների՝ կառուցվածքի, միկրո, մակրո դինամիկաների միջոցով:

Հետազոտության ընթացքում ստացված արդյունքները կարող են օգտագործվել տարիքային և մանկավարժական հոգեբանության դասընթացների ժամանակ:

Գործնական նշանակությունը.

Ստացված արդյունքները հնարավորություն կտան իմանալու, թե ինչպիսի ազդեցություն կարող է ունենալ դեպրիվացիան երեխայի հոգեկան և ֆիզիկական զարգացման վրա: Այն կօգնի ճիշտ մշակել և գործնականում կիրառել դեպրիվացիայի ենթարկված երեխաների հետ տարվող աշխատանքների կազմակերպումը մեթոդների և մոտեցումների ընտրության հարցում: Երեխան, մտնելով փոխարինող ընտանիք, կան այլ տիպի մանկական հաստատություն, փորձում է ներառվել, բայց առաջին հերթին հանդիպում է դժվարությունների՝ ընտանիքի, մեծահասակների կողմից առաջադրված կանոնների և նորմերի հետ կապված: Այստեղ հիմնական խնդիրը համարվում է օգնությունը փոխարինող ընտանիքին. մանկատան դաստիարակներին. հարմարումը պետք է լինի երկկողմանի, նորմերի և կանոնների որոշակի համաձայնեցվածությամբ: Մեր կողմից առաջադրված հանձնարարականները կօգնեն հոգեբաններին երեխայի մոտ մեղմելու, շտկելու դեպրիվացիայից առաջացած հետևանքները:

Աշխատանքը օգտակար կլինի փոխարինող ընտանիքների, մանկատների հոգեբանների համար, կօգնի նրանց հաղթահարելու աշխատանքի ընթացքում հանդիպած դժվարությունները:

Հետազոտության փորձագիտությունը: Ատենախոսության նյութերը և արդյունքները գեկուցվել և քննարկվել են Երևանի պետական համալսարանի հոգեբանության ամբիոնի նիստերում, ՍՕՍ գյուղում, հատուկ տիպի մանկատանը կազմակերպված սեմինարներում:

Պաշտպանությանը ներկայացվող հիմնական դրույթները:

1. Երեխան, մտնելով փոխարինող ՍՕՍ ընտանիք, հանդիպում է շատ դժվարությունների, բայց ՍՕՍ մայրերի, ընտանիքի մյուս երեխաների օգնությամբ ստեղծվում են բարենպաստ պայմաններ, տեղի է ունենում երկկողմ հարմարում, որը մոր և երեխաների միջև հուզական կապի առաջացման գրավականն է:

2. Մանկատանը երեխաների համար չեն ստեղծվում հատուկ պայմաններ դեպրիվացիայից առաջացած հետևանքների կոմպենսացման համար մի շարք պատճառներով՝ դաստիարակի վերաբերմունքը երեխայի նկատմամբ անհատական չէ, հարմարումը միակողմանի է (միայն երեխայի կողմից):

3. ՍՕՍ գյուղում մեծահասակի (ՍՕՍ մոր) մշտական առկայությունը երեխաների մոտ դեպրիվացիայի մեղմացման հիմնական հոգեբանական գործոնն է:

4. ՍՕՍ մայրերի մոտ անձնային տազնապալիությունը ավելի բարձր է, քան դաստիարակների մոտ:

Հետազոտության արդյունքների հավաստիությունը և հուսալիությունը ապահովված են օգտագործված մեթոդներով, մեթոդաբանական հիմքով, տվյալների որակական և քանակական վերլուծություններով:

Աշխատանքի ծավալը և կառուցվածքը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացությունից, մեթոդական հանձնարարականներից, օգտագործված գրականության ցանկից (գրականության 74 աղբյուր), հավելվածներից: Աշխատանքը պարունակում է 7 աղյուսակ, 10 նկար, անմիջական դիտման արդյունքները: Ատենախոսության ծավալը՝ 145 էջ:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածության մեջ հիմնավորված է թեմայի արդիականությունը, ձևակերպված վարկածը, սահմանված նպատակը, խնդիրները, պաշտպանության ներկայացվող դրույթները: Առաջադրված են մեթոդաբանական հիմքը, ուսումնասիրության մեթոդները, գիտական նորույթը, տեսական և գործնական նշանակությունը, ատենախոսության կառուցվածքը:

Ատենախոսության առաջին գլխում «Հոգեկան դեպրիվացիան որպես հետազոտական հիմնախնդիր» հանգամանորեն վերլուծվում են հոգեբանների հիմնադրույթները (Բոուլբի Ջ. (1951), (Յ.Լանգմայեր և Ջ.Մատեյչեկ (1984), (Ն.Վ.Իսկոլոսկի 1985), (Կ.Բեյլեր (1991), (Լադիսլավ Պոժար (1996) հոգեկան դեպրիվացիայի հայեցակարգերի զարգացման նշանակության մասին: Դեպրիվացիան ինչ-որ բանի կորուստ կամ կարևոր կենսական պահանջմունքի բավարարությունից զրկվածություն է, որը տևում է երկար ժամանակ: Դա ոչ թե ֆիզիկական, այլ հոգեկան պահանջմունք է: Յ.Լանգմայերը և Ջ.Մատեյչեկը առաջ են քաշել «բազմամակարդակ» տեսությունը, որը ներառում է բոլոր տեսությունները հոգեկան դեպրիվացիայի վերաբերյալ: Եվ մենք կողմնակից ենք «բազմամակարդակ» տեսությանը, ու հիմք ենք ընդունում այն փորձարարական աշխատանքում:

Առաջին գլխի երկրորդ ենթագլխում ներկայացրել ենք դեպրիվացիայի առաջացման պայմանները: Համաձայն Յ.Լանգմայերի և Ջ.Մատեյչեկի՝ երեխայի լիարժեք զարգացման համար հարկավոր են մոդալության տարատեսակ ազդակներ (տեսողական, լսողական և այլն), որոնց պակասը առաջացնում է զգայական, ազդակային դեպրիվացիա:

Ա.Ամիրջյանը և Ա.Սարգսյանի (1997) կողմից կատարած ուսումնասիրությունը մանկատան սաների հոգեբանական առանձնահատկությունների վերաբերյալ ցույց տվեց, որ երեխաների մոտ ի հայտ են գալիս մի շարք հակասություններ, մի կողմից նրանք ձգտում են արժանանալ մեծահասակների ուշադրությանը, հոգատարությանը, մշտապես զգալով սիրո, ջերմության պակասը, մյուս կողմից խուսափում են և վաճում իրենց առօրյա հաղորդակցման շրջանակից դուրս գտնվող անձանց: Մանկատան սաներին բնորոշ է նաև վախը, տագնապալիության աստիճանը, այն ավելի բարձր է, քան այն երեխաների մոտ, որոնք որոշ ժամանակ ապրել են ընտանիքում:

Առաջին գլխի երրորդ ենթագլխում ներկայացրել ենք, թե ինչպես է անդրադառնում ընտանիքը անձի ձևավորման և զարգացման վրա: Ընտանիքին բնութագրական են հետևյալ հատկանիշները. (Ս.Գ.Հիլ, (1984)

Ընտանիքում երեխաների դաստիարակությունը կախված է առաջին հերթին ամուսինների միջև ճիշտ փոխհարաբերություններից՝ նրանց նշանակալիությունից, երեխաների մասին հոգատարությունից (Է.Չաքարյան (1997):

Չորրորդ ենթագլխում նկարագրվում են դեպրիվացիայից առաջացած հետևանքների կանխարգելումն ու շտկումը:

3. Լանգմայերը և Ջ. Մատեյչեկը առաջարկում են հոգատարության տիպեր, որոնք շատ թե քիչ կարող են երեխաներին զերծ պահել դեպրիվացիայից առաջացած հետևանքներից, թեև նրանք գտնում են, որ այդ հաստատությունները ևս ունեն իրենց թերությունները, որոնք ուղղելի են ժամանակի ընթացքում:

Ներկայացնում ենք հոգատարության տիպերից ՍՕՍ մանկական գյուղի կառուցվածքը.

ՍՕՍ մանկական գյուղ. Այստեղ կան մայրեր, մորաքույրեր, որոնք օգնում են միմյանց: Այստեղ մայրը դաստիարակության և խնամքի համար վերցնում է տարբեր տարիքի և սեռի մինչև 8 երեխաներ: Իհարկե, պետք է հաշվի առնել, որ ժամանակակից հասարակությունում կան շատ ընտանիքներ՝ ամուսնալուծված զանազան պատճառներով: Այդ ժամանակ երեխայի դաստիարակության հարցերով զբաղվում է մայրը: Մանկատանը մեծ դեր են կատարում կանայք: Ըստ Յ. Լանգմայերի՝ մայրն է տալիս երեխային հուզական վստահություն դեպի մարդկությունը:

Ատենախոսության երկրորդ գլխում «Փորձարարական հետազոտության ընթացակարգը» անդրադառնում ենք հետազոտության կազմակերպմանը, մեթոդներին: Հետազոտությունները անցկացրել ենք ՍՕՍ մանկական գյուղում (գ. Կոտայք), Երևանի հատուկ տիպի և «Ձատիկ» մանկատաներում: Հետազոտությանը մասնակցել են տարբեր տարիքի 156 երեխաներ և ընդհանուր թվով 24 ՍՕՍ մայրեր, դաստիարակներ:

Հետազոտության ընթացքում կիրառել ենք դիտման, գրույցի, փաստաթղթային, անկախ բնութագրման, թեստավորման և վիճակագրական մշակման մեթոդները: Մասնավորապես օգտագործվել են հետևյալ մեթոդները.

Անձի ուսումնասիրման պրոյեկտիվ մեթոդներ՝ «Գոյություն չունեցող կենդանի» թեստ; գունային ընտրության մեթոդ; դպրոցական տազնապալիության ախտորոշման թեստ; ուշադրության, հիշողության, մտածողության, խոսքի զարգացման մակարդակի ախտորոշման մեթոդ:

Ներքնտանեկան փոխհարաբերությունների ուսումնասիրման մեթոդներ՝ «PARI» մեթոդիկա; ընտանիքի նկար թեստ (կրկնակի թեստավորում):

Անձի ուղղվածության ոլորտի մեթոդ՝ անձնային տազնապալիության և ռեակտիվության գնահատման սանդղակ:

Հոգեբանական խաղ «Նվեր» (կրկնակի թեստավորում):

Կիրառել ենք **ոչ պարամետրիկ վիճակագրական մեթոդներ՝ F թեստ, միջնաբվային չափորոշիչ:**

Ձուգահեռներ անցկացնելով տարբեր մեթոդիկաների կիրառման միջոցով ստացված տվյալների միջև, արդյունքները համադրվել են միմյանց հետ՝ ինչը հնարավորություն է տալիս համեմատություններ կատարել՝ հանգեցնելով որոշակի եզրակացությունների: Մեր հետազոտական աշխատանքում հիմք ենք ընդունել չէխ հոգեբան Լ. Պոժարի կողմից տրված հոգեկան դեպրիվացիայի հատկանիշների գիտական սահմանումը: Ըստ նրա հոգեկան դեպրիվացիայի նշանները շատ տարբեր են, սկսած թեթև կամակորությունից և աղմկարարությունից մինչև քնավորության և մտավոր զարգացման խախտումները:

Երկրորդ գլխի հաջորդ ենթագլխում ներկայացված են ՍՕՍ-մանկական գյուղի, հատուկ տիպի, «Ձատիկ» մանկատան երեխաների հոգեկան դեպրիվացիայի դրսևորումների հետազոտության արդյունքները:

«Ընտանիքի նկար» թեստի կիրառման ստացված արդյունքները:

Աղյուսակ 1

ՍՕՍ ընտանիք n=78	Հատուկ տիպի մանկատան n=39	«Ձատիկ» մանկատան n=39
50%	41%	43,72%
Նկարել են ՍՕՍ ընտանիքին՝ ՍՕՍ մայրերին ներառյալ:	Մանկատան երեխաները նկարել են միայն տուն և կենդանիներ, որը խոսում է ուժեղ հուզական կոնֆլիկտի, ընտանեկան վիճակից դժգոհության մասին:	Նկարել են միայն իրենց՝ պատկերը գրավում էր ամբողջ բոլորը, որը վկայում է ընտանիքում իրենց ԵՍ-ի աննշան լինելու և հոգատարության պահանջի մասին:

Ընտանիքի նկար թեստը մեզ բույլ է տալիս ասելու, որ ՍՕՍ հաստատության սաները ներառվել են ընտանիք, տեղի է ունեցել երկկողմ հարմարում, այդ ընտանիքը համարում են իրենց հարազատը, ստեղծել են կայուն փոխհարաբերություններ ընտանիքի անդամների հետ, և ընտանիքների մեծամասնության մոտ չի դիտվում տազնապալի, կոնֆլիկտային վիճակներ: Եվ այս տվյալները ամրապնդվում են մեր կողմից կիրառած զուգահեռ թեստավորման արդյունքներով:

Ընտանիքի նկար թեստի արդյունքներից կարող ենք եզրակացնել, որ մանկատան երեխաների մեծամասնությունը հրաժարվում է նկարել իր ընտանիքը, և որոշ մասը նկարել էր տուն և, ընդհանրապես, չէր նկարել մարդ, որը խոսում է հուզական ուժեղ կոնֆլիկտի, բարձր տազնապալիության, ընտանեկան վիճակից դժգոհության մասին:

Դպրոցական տազնապալիության ախտորոշման թեստի կիրառման ստացված արդյունքները.

ՍՕՍ մանկական գյուղ

1. Բարձր տազնապալիություն - 30%
2. Միջին տազնապալիություն - 64%
3. Ցածր տազնապալիություն - 6%

ՍՕՍ գյուղի երեխաների մեծամասնության մոտ տազնապալիությունը միջին է:

Հատուկ տիպի մանկատան

Հատուկ տիպի մանկատան երեխաների մեծամասնության մոտ տազնապալիությունը բարձր է:

1. Բարձր տազնապալիություն - 76%
2. Միջին տազնապալիություն - 14%
3. Ցածր տազնապալիություն - 10%

«Ձատիկ» մանկատան

«Ձատիկ» մանկատան երեխաների տազնապալիության ցուցանիշները.

1. Բարձր տազնապալիություն - 66%
2. Միջին տազնապալիություն - 24%
3. Ցածր տազնապալիություն - 10%

Այսպիսով, ցուցանիշների վերլուծությունից երևում է, որ մանկատան երեխաները ընտանիք հասկացության պատկերացում չունեն, և գտնվում են լարված վիճակում. տազնապալիությունը բարձր է: Մանկատան երեխաները բացատրում էին, որ սա մանկատան է, և դաստիարակը զայրանում է, հարվածում իրենց, քանի որ իրենք անկարգ են: Իսկ ՍՕՍ երեխաների մեծամասնությունը նշում էր, որ մարդկանց դեմքերը ուրախ են, նրանց մոտ առկա է ընտանիք հասկացությունը, պատկերացումը: Այս նույն թեստը կիրառել ենք նաև լիարժեք ընտանիքի երեխաների նկատմամբ, և նրանք պատասխանել են, որ դա իրենց տունն է, և մայրիկը աղջկան կամ տղային ինչ-որ բան է հարցնում, և մոր ու երեխայի դեմքերը ուրախ են:

«Գոյություն չունեցող կենդանի» թեստի կիրառումից ստացված արդյունքները

Աղյուսակ 2

ՍՕՍ մանկական գյուղ n=78	Հատուկ տիպի մանկատան n=39	«Ջատիկ» մանկատան n=39
63,15%	67,78%	65,5%
Այս երեխաների մոտ դիտվում է ինքնավստահություն, դրական վերաբերմունք շրջապատի հանդեպ: Նկատվում է բարձր ինքնագնահատական, դիտվում է ռացիոնալություն որոշում կայացնելու մեջ, մտածվածություն:	Նրանք չեն կարողացել նկարել ոչինչ:	Դիտվում է վախ, եսասիրություն, վարքը դեմոնստրատիվ է: Նկարներում արտահայտված է ագրեսիան, պաշտպանողական ռեակցիան:

Այսպիսով, հետազոտության արդյունքների վերլուծությունից եզրակացնում ենք, որ ՍՕՍ-հաստատության սաների մոտ դիտվում է ինքնավստահություն, դրական վերաբերմունք շրջապատի հանդեպ: Իսկ երկու մանկատան երեխաների մոտ դիտվում է անորոշություն, վախ ակտիվ գործունեության նկատմամբ, եսասիրություն, վարքում՝ հիստերիկ դեմոնստրատիվ շարժումներ:

«Նվեր» հոգեբանական խաղի կիրառումից ստացված արդյունքները

Հատուկ տիպի մանկատան և, նաև ՍՕՍ գյուղի մանկապարտեզի երեխաների (4-6 տարեկան) հետ անցկացրել ենք հետևյալ հոգեբանական խաղը՝ «Նվերներ»:

Սեղանին դրված էին բազմաթիվ անձանոթ խաղալիքներ, երեխաները հերթով վերցնում էին իրենց դուր եկող խաղալիքը, մոտենում երեխաների շարքին, որոնք նստած էին մեջքով դեպի սեղանը, նվիրում խաղալիքը՝ ում որ ցանկանում էին: Այս խաղը մշակվել է Ջ.Մ.Բոգոսլավսկու կողմից և զարգացնում է երեխաների մոտ նվիրելու ձգտման դաստիարակությունը: Այս խաղի ընթացքում մենք փորձում էինք ժեստերի, դիմախաղի, խոսքի միջոցով արտահայտել այն զգացմունքը, որ ապրում են նրանք նվիրելիս ու նվեր ստանալիս: ՍՕՍ գյուղի մանկապարտեզի երեխաները մեծ ցանկությամբ ներգրավվում էին խաղի մեջ և հուզականությունը մեծ էր: Երեխաները ուրախությամբ էին դիտում խաղալիքները, նույնիսկ կռվում էին խաղալիքների համար: Եվ նվիրելու ընթացքը երեխաներին հաճույք էր պատճառում:

Հատուկ տիպի մանկատանը մենք ակնհայտապես չեղանք այդքան մեծ ոգևորության, երեխաների մոտ հուզական ներգրավվածությունը խաղի մեջ ցածր էր, մենք ասում էինք խաղի քայլերը և նրանք հերթով կատարում էին, որպես պարտականություն: Այս խաղը մենք կիրառել ենք 4 ամիս հետո, ՍՕՍ ընտանիքի, մանկապարտեզ հաճախող լիարժեք ընտանիքի, հատուկ տիպի մանկատան երեխաների հետ և ստացել ենք հետևյալ արդյունքները: Մենք ենթադրում էինք, որ երեխայի համար «Նվեր» խաղը կարևոր իրադարձություն կլինի, և կանդորադառնա նրա պրակտիկ գործողությունների, հատկապես՝ նվիրելու գործընթացի վրա: Մանկատան երեխաների 85%-ը չցանկացավ խաղալիքները նվիրել և պահեց իր մոտ: Այս փորձի ընթացքում առանձնացրել ենք պատասխանների հետևյալ ձևերը.

1. Երեխաները գտնում էին, որ բոլոր խաղալիքները իրենց անհատն էին:
2. Որոշ խաղալիքներ ծանոթ էին, բայց չէին հիշում, թե որտեղ են տեսել:
3. Հիշում էին, որ այդ խաղալիքները տեսել են «Նվեր» խաղում և բացատրում էին, թե ինչպես կարելի է խաղալ:
4. Երեխաները հիշում էին ամեն ինչ և պատմում, թե ինչպիսի արարքներ և ապրումներ են ունեցել:

Հետաքրքիր էր այն, թե ինչպես էին պատմում երեխաները այդ խաղի մասին (մանկատան, ՍՕՍ ընտանիքի և մանկապարտեզի) 4 ամիս անց: Հարցումներից պարզվեց, որ մանկատան երեխաների մեծամասնությունը պատասխանել է ըստ 2-րդ տարբերակի: ՍՕՍ երեխաները՝ ըստ 3-րդ և մանկապարտեզի երեխաները՝ ըստ 4-րդ տարբերակի:

Մանկատան երեխաները պատմում էին հոգնակիով: Օր. արկղի մեջ լցրեցինք խաղալիքներ և նվիրեցինք միմյանց: Այս երեխաները չէին հիշում, թե ում ինչ նվերներ էին տվել կամ իրենք ումից ինչ նվեր էին ստացել:

Մանկապարտեզ հաճախող երեխաները (ՍՕՍ հաստատության, լիարժեք ընտանիքի երեխաներ) իրենց արարքների և ապրումների մասին պատմում էին առաջին դեմքով:

Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ այս խաղը մանկապարտեզի, ՍՕՍ հաստատության երեխաների համար անձնային, հոգեբանական փորձի իմաստով իրադարձություն էր, ինչը մնում է ապրելու նրանց գիտակցության մեջ ընդմիշտ: Իսկ մանկատան երեխաների մոտ այդ խաղը կարծես անցել է գիտակցության կողքով և մնացել առօրյա կյանքում, դիտվում է «ստարացում սեփական փորձից», երբ կյանքում ապրած առանձին պահեր չեն դառնում իրենց կյանքի իրադարձությունները, չեն յուրացվում և չեն մտնում իրենց հոգեբանական փորձի մեջ:

ՍՕՍ մանկական գյուղ n=78		Հատուկ տիպի մանկատուն n=39		Չատիկ՝ մանկատուն n=39	
1	2	3	4	5	6
Գույների թվաքանակություն	Գույների թվաքանակություն	Գույների թվաքանակություն	Գույների թվաքանակություն	Գույների թվաքանակություն	Գույների թվաքանակություն
42 (53,84%)	51	56	17 (43,58%)	15	20 (51,28%)
Նկատվում է պայված ստեղծագործական դիրք, ունեն հավաքագրության հիպոտետիկ տիպ: Պահանջ ունեն միջավայրի հետ մերթաշնակ փոխհարաբերությունների, խորը կապվածության, զգացմունքային ջերմության և հակված են բացարձակամասցեկու կապվածության օբյեկտը: Որոշման կայացումը յուրահատուկ է, ունեն վառ երևակայություն:	Գտնվում են լարված, ամկայուն վիճակում, ունենում են հարմարման թփառություններ: Նվաստվում է արտահայտված ընտրողականություն կյանքի արժեքների համոզել և մարդկային փոխհարաբերություններում: Հուզապես անկայուն են, ձգտում են սոցիալական միջավայրի հետ կապ հաստատել:	Նկատվում են հուսահատություն, խոցելիություն, հարմարվողականության թփառություն, տրամադրության միմյալին ֆոն և փայխատ գործունեության ասինամախակությունների: Դիտվում է վիճակի անկայունություն, ամբարտաբարկվածություն ամուսնային կապումներից և տրամադրության ցածրացած ֆոն: Անտանալի վիճակից դուրս գալու պահանջ ունեն և զգում են այն հարթահարելու անկարողություն:			
7	8	9	10	11	12
Գույների թվաքանակություն	Գույների թվաքանակություն	Գույների թվաքանակություն	Գույների թվաքանակություն	Գույների թվաքանակություն	Գույների թվաքանակություն
46 (58,9%)	07	76	28 (71,8%)	60	24 (61,5%)
Ունեն բարձր գգայունակություն արտաքին ազդակների համոզել: Չգտում ունեն հարթահարելու ասինամախակությունները, այդ բնույթ ունեն, հետափորությունը, որը անցնալու է երեխային իր միջավայրից որոշումների ընդունման խնդրում, ձգտում են ինքնուրույնության:	Դիտվում է սրբա՝ կապված ասինամախակությունների, արգելքների հետ: Պահանջում ունեն տնօրինելու իրենց կյանքը: Բողոք են ցուցաբերում միջինակարգության դեմ: Երեխաների մոտ սրբային վիճակ է դիտվում, որը առաջացել է անձնային դիրքերի պահպանման ցանկության ամբարտաբարկվածությունից:	Դիտվում է սրբային վիճակ՝ կենսաբանական, սեքսուալ պահանջմունքների ճնշման հետևանքով:			

Գունային ընտրության մեթոդի միջոցով ստացված արդյունքների վերլուծության հիման վրա եկանք այն եզրակացության, որ ՍՕՍ հաստատության սաների մոտ չի նկատվում հուզական լարվածություն, բարձր տագնապալիություն, և հակառակ պատկերը դիտվում է երկու մանկատան երեխաների մոտ, որոնք գտնվում են լարված, անկայուն վիճակում, ունենում են հարմարման դժվարություններ, անտանալի վիճակից դուրս գալու պահանջ և զգում են այն հարթահարելու անկարողություններ:

Հետազոտության ընթացքում բացահայտված առանձնահատկությունները խմբավորել ենք հետևյալ կերպով.

Աղյուսակ 4

ՍՕՍ ընտանիքի առանձնահատկությունները	Մանկատան առանձնահատկությունները
Մեծահասակի մշտական կայուն առկայություն:	Մեծահասակի հաճախակի փոփոխություն:
ՍՕՍ մոր վերաբերմունքը անհատական է երեխայի հանդեպ:	Դաստիարակի վերաբերմունքը երեխայի հանդեպ խմբակային է:
Յուրաքանչյուր երեխա ունի իր պարտականությունները, բարձր է պատասխանատվության զգացումը:	Դաստիարակը երեխայի բոլոր արարքները ենթարկեցնում է մասսայական կանոններին, ինչը խոչընդոտում է երեխայի հարմարմանը, պատասխանատվության զգացումի զարգացմանը:
Համեմատաբար արագ է տեղի ունենում ադապտացիան: ՍՕՍ ընտանիքում ադապտացիան երկկողմանի է:	Ադապտացիան միակողմանի է, և հարմարումը միայն երեխայի կողմից է:
ՍՕՍ հաստատության երեխայի մոտ չի դիտվում «սեփական փորձից օտարացում»:	Մանկատան երեխայի մոտ դիտվում է «սեփական փորձից օտարացում»:
Ստեղծվում են ընտանեկան մոտ սցենարներ և երեխան ազատվում է անցյալի սցենարից:	Երեխայի համար չի ստեղծվում ընտանեկան մոտ սցենար:
Դիտվում է տեղեկատվության ազատ շրջանառություն:	Չի դիտվում տեղեկատվության ազատ շրջանառություն:

Ատենախոսության երրորդ գլխում անդրադառնում ենք ՍՕՍ-մայրերի և մանկատների դաստիարակների անձնային առանձնահատկությունների հետազոտությունների արդյունքներին:


Կատարվել է խմբային վերլուծություն անձնային և ռեակտիվ տագնապալիության բնույթի հիման վրա: Նպատակ ենք ունեցել պարզելու համեմատվող խմբերում ընդգրկված ՍՕՍ մայրերի և դաստիարակների հոգեկան այն առանձնահատկությունները, որոնք հանդիսանում են միջանձնային փոխհարաբերությունների և հուզական կապի ձևավորման հիմնական գործոններ:

Նշենք, որ հետազոտման ժամանակ ՍՕՍ մայրերից 10-ի մոտ նկատվել է անձնային բարձր տագնապալիություն, ի տարբերություն մանկատան դաստիարակների (2-ի մոտ):

Անձնային տազնապալիության բնտի կիրառումից ստացած արդյունքները /Միջնաբվային չափորոշիչ/

ՍՕՍ մայրեր՝ n=12
 դաստիարակներ՝ n=12

Աղյուսակ 5




$m_x=60, m_y=45, m_x > m_y$

Դիտումներից, գրույցից պարզեցինք, որ այն մայրերը, որոնք աշխատում են բավականին երկար ժամանակ, տարիների ընթացքում փոխվում են՝ շփվելով այդ երեխաների հետ: Քանի որ նրանք ապրում են այդ երեխաների կյանքով, փորձում են նրանց ներգրավել ընտանիք, որը բավականին դժվար գործընթաց է: Մանկատան դաստիարակների 80% ամուսնացած են, ունեն իրենց երեխաները, և չեն ապրում մանկատան երեխաների կյանքով:

Մանկատան դաստիարակները ունեն իրենց ընտանիքները, երեխաները և այդքան էլ ուշադրություն չեն դարձնում մանկատան սաներին, չեն ապրում նրանց կյանքով: Դաստիարակները ամեն օր հերթափոխում են միմյանց: Կարող ենք ասել, որ հուզական կայուն կապ չի ստեղծվում մեծահասակի հետ: Մանկատան երեխաները բացասաբար չեն ազդում դաստիարակների վրա:

Ռեակտիվ տազնապալիության բնտի կիրառումից ստացած արդյունքները /Միջնաբվային չափորոշիչ/

Աղյուսակ 6



$m_x=45, m_y=60, m_x < m_y$

Համեմատելով ստացած արդյունքները, նկատում ենք, որ ռեակտիվ բարձր տազնապալիություն դիտվում է մանկատան դաստիարակներից 10-ի մոտ և 1-ի մոտ դիտվում է ռեակտիվ չափավոր տազնապալիություն, 1-ի մոտ ռեակտիվ ցածր տազնապալիություն: Իսկ ռեակտիվ չափավոր տազնապալիությունը բարձր է ՍՕՍ մայրերից 10 մոտ, 1-ի մոտ՝ ռեակտիվ ցածր տազնապալիություն, մեկ մոր մոտ՝ ռեակտիվ բարձր տազնապալիություն:

Այն դաստիարակները, որոնց մոտ նկատվում է ռեակտիվ բարձր տազնապալիություն, բնութագրվում են բարձր լարվածությամբ, անհանգստությամբ և նյարդայնությամբ:

ՍՕՍ մայրերը գիտակցում են իրենց պատասխանատու և դժվարին աշխատանքը, և շատերը ցանկանում են ձեռքբերել այս կամ այն ճնշող հոգեվիճակից: ՍՕՍ գյուղում ամիսը երկու անգամ տեղի են ունենում հոգեբանական թրեյնինգներ՝ մայրերին հուզող պրոբլեմների հաղթահարման նպատակով:

«PARI»-մեթոդիկայի կիրառումից ստացված արդյունքները

Աղյուսակ 7

	Տեսակետ-հատկանիշ	ՍՕՍ մայրեր n=12	Մանկատան դաստիարակ, n=12	Նիշերի չափանիշ a=0,05	
1	2	3	4	5	
Վերաբերմունքը ընտանիկան դեմին	Կախվածությունը ընտանիքից	12,5	12,5	2,69	
	Անձնագոհության զգացում	12,0	13,5	4,19	
	Ընտանեկան կոնֆլիկտներ	12,8	12,8	2,69	
	Ծնողների գերեղիցնակություն	13,7	14,5	3,44	
	Անբավարարվածության զգացում տնային տնտեսուհու դերից	11,3	13,2	4,69	
	Ամուսնու անասնակից լինելը ընտանեկան կյանքին	12,3	12,6	3,01	
	Մոր դոմինանտությունը	12,0	12,8	3,44	
	Մոր կախվածությունը և անիքնությունը	14,2	14,2	2,69	
Ծնողի վերաբերմունքը երեխայի հանդեպ	Օպտիմալ հուզական շփում	Վերբալիզացիա	17,7	17,7	7,02
		Ընկերական փոխհարաբերություններ	15,2	10,5	2,99
		Երեխայի մոտ ակտիվության զարգացում	15,8	16,4	3,21
	Գրգռվածություն հետազոտություն	Երեխայի և ծնողի միջև հավասար փոխհարաբերություններ	16,7	15,0	4,35
		Գրգռվածություն, պոռթկունություն	12,3	13,4	3,72
		Ավելորդ խստություն, դաժանություն	10,5	13,2	2,69
		Երեխայի հետ շփման խուսափում	12,2	12,2	5,35

1	2	3	4	5
Ավելորդ սենեավածություն երեխայի համար	Գերհոգատարություն	12,7	15,0	5,08
	Կամքի ճնշում	11,8	12,8	3,69
	Վիրավորելու վախ	14,2	16,2	4,69
	Ազդեցիվության ճնշում	11,0	12,2	3,75
	Մեքսուալության ճնշում	10,0	14,8	3,25
	Ներխուժում երեխայի ներաշխարհ	12,8	16,8	6,69
	Երեխայի արագ զարգացման ձգտում	11,2	13,2	4,89

1. Բառային դրսևորումների, վերբալիզացիայի առաջացում մոր կողմից:
Մանկատան դաստիարակների և ՍՕՍ մայրերի ցուցանիշների միջև չի դիտվում տարբերություն: Ըստ ստացված ցուցանիշների ՍՕՍ մայրերն և դաստիարակները խոսեցնում են երեխաներին, դրողում են նրանց արտահայտվելու: Բայց F թեստի արդյունքներից նկատում ենք, որ դիսպերսիաների տարբերության մասին վարկածը հաստատված է: Նույնը հաստատում են դիտումները, գրույցը. դաստիարակները ցանկություն չունեն մանկատան երեխաների հետ գրուցելու:

2. Հուզական հեռավորությունը երեխայից - ավելորդ խստությունը, դաժանությունը, լարվածությունը, դյուրագրգռությունը բարձր է մանկատաների դաստիարակների մոտ և բացասական ազդեցությունն է ունենում մանկատան երեխայի վրա՝ խորացնելով դեպրիվացիայից առաջացած հետևանքները:

3. Երեխայի հետ շփման խուսափում՝ և ՍՕՍ մայրերի, և դաստիարակների մոտ նույն ցուցանիշն է: Բայց F թեստի արդյունքներից նկատում ենք, որ ստացված տվյալները գերազանցում են ադյուսակում բերված ցուցանիշներին: Այսինքն. դիսպերսիաների տարբերության մասին վարկածը հաստատված է: Դիտումները ցույց են տալիս, որ իրոք դաստիարակները ավելի շատ են խուսափում երեխաների հետ շփումից, քան ՍՕՍ մայրերը:

4. Ավելորդ սենեավածություն երեխայի վրա - գերհոգատարությունը բարձր է մանկատաների դաստիարակների մոտ, որը նույնպես բացասաբար է ազդում երեխայի լիարժեք զարգացման վրա: Երեխան մտնում է հասարակություն ամբողջովին անպատրաստ այդ փոխհարաբերություններին: Այն խորացնում է սոցիալական դեպրիվացիան:

5. Դաստիարակները շատ են վերահսկում երեխաների վարքը, խաղը, ներխուժում նրանց ներաշխարհ, ինքնուրույն ոչինչ թույլ չեն տալիս կատարելու:

ՍՕՍ մայրերի և մանկատան դաստիարակների հետ կիրառել ենք գունային ընտրության մեթոդը, որպեսզի բացահայտենք, թե ինչ հոգեկան վիճակում են գտնվում նրանք: ՍՕՍ-մայրերից 7-ին բնորոշ են իշխելու ձգտումը, ակտիվ դիրքորոշումը և հուզականությունը: Նկատվում է բարձր հուզականություն, ինքնադրսևորման բարձր պահանջ, խնդրի լուծման յուրօրինակություն:

Դաստիարակներից 6-ը ձգտում է ինքնահաստատման, և նկատվում է գրգռված վիճակ, որը ղեկավարվում, կառավարվում է անձի կողմից:

Նրանք ստեղծագործող դիրք են զբաղում շրջապատում, պատկանում են հիպոստենիկ տիպին: Շրջապատի հետ ներդաշնակ փոխհարաբերությունների պահանջ ունեն: Ունեն էսթետիկ կողմնորոշում, կյանքի դժվարություններից փախուստի են դիմում դեպի արվեստի աշխարհ:

Ունեն հուզական և ֆիզիկական լարվածություն: Չգտում են հանգստության և օգնության, շրջապատի հետ բարեկամական փոխհարաբերությունների պահպանման՝ չնայած նրանց ներանձնային հակասությանը: Հետազոտության ընթացքում կատարված աշխատանքները որոշ չափով կարելի է ասել նաև շտկողական էին և տրվել են մեթոդական հանձնարարականներ դեպրիվացիայից առաջացած հետևանքների շտկման ուղղությամբ:

1. Հատկապես մանկատան նախադպրոցական և դպրոցական տարիքի երեխաների նկատմամբ կիրառել ենք իդենտիֆիկացիայի մեթոդը, իսկ այնուհետև այն կիրառում էին մանկատան դաստիարակները: Երեխաները սկսում էին նույնականացնել իրենց՝ տիկնիկի կամ որևէ կենդանու հետ: Այդ խաղալիքները երեխայի համար կարող են դառնալ հուզական հաղորդակցման օբյեկտ, հանդես գալ, որպես լավ ընկեր, որը ամեն ինչ ընդունում է, և չի հասկանում չարը: Մեր խնդիրը կայանում է նրանում, որ մենք սովորեցնում ենք յուրաքանչյուր երեխայի ցուցաբերել հոգատարություն իր սեփական խաղալիքի հանդեպ, հովանավորել նրան, ապրումակցել տիկնիկի կյանքում տեղի ունեցող տարբեր դեպքերի առիթով:

2. Ազդեցիայի մեղմացման, երեխաների և մեծահասակների միջև հաղորդակցման հմտությունների ձևավորման համար կիրառել ենք հետևյալ խաղը՝ «Հակառակ աշխարհը»: Այս խաղը խաղացել ենք և՛ ՍՕՍ մայրերի, դաստիարակների և՛ երեխաների հետ, որը նպաստում է միջանձնային փոխհարաբերությունների ձևավորման բարենպաստ ընթացքին:

3. Դերային խաղերի կիրառում. մայրերը դերային խաղի միջոցով դառնում են երեխաներ, իսկ երեխաները՝ ծնողներ (Թեմայի ընտրությունը պետք է լինի երկկողմանի):

4. Շարժուն, ակտիվ խաղ՝ «Մեղիկը», որն ուղղված է ազդեցիվ ազդակների լիցքաթափմանը:

5. Երեխաների, ՍՕՍ մայրերի հետ կիրառել ենք հետևյալ հեքիաթ-խաղը. «Ճանճողուկների ընտանիքը»՝

- Այն զարգացնում է հույզերի դրսևորման խոսքային ձևերը;
- Ներկայացնում է ընտանեկան ապրումների արդիականությունը՝ կոնֆլիկտ, ծնողական գուրգուրանք, հաշտեցում:

6. Ծծկեր երեխաների համար մշակված են մարմնամարզական վարժություններ, որոնք զարգացնում են ընդհանուր մտորիկական և նաև վեգետոթերապիա՝ ռիթմիկ շոյանք, նուրբ, զգայական շփումներ:

7. Ռեգրեսիվ թերապիան օգտագործում են մտավոր ցածր կարողություն ունեցող երեխաների համար: Ըստ ռեգրեսիվ թերապիայի երեխան անկախ տարիքից պետք է անցնի իր մանկության պարզագույն մակարդակները, որպեսզի հասնի մտավոր զարգացման բարձրագույն մակարդակին: 10 տարեկան երեխային կերակրում են շշով, նա խոսում է 2 տարեկան երեխայի նման:

8. Դաստիարակներին, ՍՕՍ մայրերին բաժանեցինք հոգեկան դեպրիվացիայի վերաբերյալ գրականություն, որի մասին նրանք տեղյակ չէին, ու ըստ նրանց, սկսեցին երեխաներին այլ աչքերով դիտել և զարմանք էին ապրում, արդյո՞ք այդ երեխաները այդքան մեծ պրոբլեմներ ունեն և ապագայում կարող են ունենալ:

10. Մանկատանը պետք է ստեղծվեն այնպիսի պայմաններ, որպեսզի ծնողազուրկ, անօթևան երեխաների մոտ հարմարումը լինի ոչ թե միակողմանի, այլ երկկողմանի, ինչը նպաստում է դեպրիվացիայի մեղմացմանը:

Ե Ձ Ը Ա Կ Ա Յ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ն Ե Ը

Փորձարարական հետազոտության արդյունքները թույլ են տալիս նշելու, որ մեր կողմից առաջ քաշված վարկածը հաստատվել է և եկել ենք հետևյալ եզրակացությունների՝

1. Մանկատունը բացասական ազդեցություն է ունենում դեպրիվացված երեխայի վրա.

- Դաստիարակի հաճախակի փոփոխությունը երեխայի կյանքը բաժանում է մասերի:

- Դաստիարակի խմբակային, այլ ոչ թե անհատական մոտեցումը խոչընդոտում է ԵՄ-ի ինքնագիտակցության զարգացմանը:

- Երեխայի բոլոր արարքները մասսայական կանոններին ենթարկելը թույլ չի տալիս նրան ընտրելու և նվազագույն չափով անձնային պատասխանատվություն կիրառելու իր իսկ արարքների համար:

- Մանկատանը երեխաների ադապտացիան միակողմանի է:

2. Փորձարարական ուսումնասիրության արդյունքները հաստատում են այն փաստը, որ ՍՕՍ փոխարինող ընտանիքը՝ որպես հոգեբանական գործոն, դրական ազդեցություն է ունենում երեխայի հոգեկան ընդհանուր զարգացման վրա: Այդ հոգեբանական դրական գործոններն են՝

- ՍՕՍ ընտանիքում մեծահասակի (ՍՕՍ մոր) մշտական, առկայությունը:

- Երեխաների նկատմամբ ՍՕՍ մոր անհատական, այլ ոչ միայն խմբակային մոտեցումը, ինչը նպաստում է երեխայի մոտ Ես-ի ինքնագիտակցման զարգացմանը:

- Յուրաքանչյուր ՍՕՍ փոխարինող ընտանիքում երեխայի ունեցած պարտականությունները, սեփական կյանքի տնօրինումը, պատասխանատվության զգացումը իր արարքների համար:

- ՍՕՍ ընտանիքում տեղի ունեցող համեմատաբար արագ և դյուրին երկկողմանի ադապտացիան:

- ՍՕՍ ընտանիքում դիտվող հուզական աջակցման բարձր մակարդակը:

3. Սկզբնական շրջանում ՍՕՍ ընտանիք ներգրավված երեխայի (3 ամիս) միջանձնային փոխհարաբերություններում նկատվում են հետևյալ ճգնաժամային փուլերը՝

- Սթրեսային փուլ:
- Դուր գալու – լարվածության փուլ:
- Ադապտացիոն փուլ:

4. «Նվեր» հոգեբանական խաղի արդյունքներից (որոնք շատ նման էին լիարժեք ընտանիքի երեխաների խաղի արդյունքներին) կարող ենք եզրակացնել, որ ՍՕՍ հաստատության երեխաների մոտ կյանքի սեփական փորձը յուրացվում է, գիտակցվում: Եվ այն հիմք է հանդիսանում անձի զարգացման համար:

5. Երեխան մոր ընտանիքում ազատվում է ընտանեկան անցյալ սցենարից (ալկոհոլ, բռնություն և այլն): Նոր ընտանիքում ստեղծվում են մոր դրական սցենարներ:

6. ՍՕՍ մայրերի անձնային տագնապալիությունը ավելի բարձր է, քան դաստիարակների մոտ:

Ատենախոսության հիմնական բովանդակությունը արտացոլված է հեղինակի հրատարակած հետևյալ գիտական հոդվածներում.

1. Դեպրիվացիան և մանկատան երեխաները - «Կանթեղ» գիտական հոդվածների ժողովածու. «Աստղիկ», Երևան, N4 (17), 2003թ., էջ 151-153:

2. Դեպրիվացիան և դրա կանխման հնարավորությունները - «Կանթեղ» գիտական հոդվածների ժողովածու. «Աստղիկ», Երևան, N1 (18), 2004թ., էջ 191-194:

3. Դեպրիվացիան և երեխան ընտանիքում - «Նախաշավիղ» գիտամեթոդական հանդես, ԿԳՆ կրթության ազգային ինստիտուտ, Երևան, N 3-4, 2004թ., էջ 69-73:

4. Փոխարինող ընտանիքի հոգեբանական ազդեցությունը դեպրիվացված երեխաների վրա - Հոգեբանությունը և կյանքը, «Չանգակ-97», Երևան, N 2-3, 2005թ., էջ 78-88

СТЕПАНЯН НАРИНЕ ЕГИШЕВНА

ВЛИЯНИЕ ПСИХОЛОГИЧЕСКИХ ОСОБЕННОСТЕЙ ЗАМЕЩАЮЩЕЙ СЕМЬИ НА ДЕПРИВИРОВАННЫХ ДЕТЕЙ (модель семьи СОС)

Диссертация на соискание ученой степени кандидата психологических наук по специальности 19.00.05 “Возрастная и педагогическая психологии”. Защита диссертации состоится 15 марта 2007 г. в 14⁰⁰ ч. на заседании специализированного Совета 020 по присуждению ученых степеней при Армянском государственном педагогическом университете им. Х. Абовяна, по адресу: г. Ереван, 375010, ул. Тигран Меци 17.

РЕЗЮМЕ

Актуальность исследования. Семья является важнейшим условием нормального развития любого ребенка. Грубые семейные дисфункции, длительная разлука с матерью или замещающим ее лицом негативно влияет на физическое и психическое развитие ребенка. Деривационная симптоматика включает в себе всю шкалу психических отклонений - от легких особенностей психического реагирования до грубых нарушений развития интеллекта и характера. Детские дома не создают должных условий для компенсации последствий депривации. Травмированный ребенок лишен модели стабильного, надежного мира с возможностью взаимной заботы, постоянной привязанности и защищенности, и нередко обречен на дезадаптацию и пополнение криминальной среды.

Психологическое исследование моделей ближайшего социального окружения и качества контактов могут помочь созданию необходимых условий для обеспечения компенсации последствий депривации социальных сирот.

Цель исследования. Выявить и сопоставить влияние психологических особенностей межличностных отношений в различных моделях замещающей семьи на процесс компенсации депривации детей, оставшихся без попечения родителей.

Научная новизна. Впервые в Армении осуществлено экспериментально-психологическое изучение депривации детей в замещающей семье СОС и детдомах. Использован методический комплекс на базе системного подхода к семье. Сравнительный анализ полученных результатов научно подтвердил эффективность модели профессиональной замещающей семьи СОС.

Теоретическая и практическая значимость. Полученные в результате экспериментального исследования данные могут пополнить психологические представления относительно влияния социального окружения на развитие ребенка, негативных последствий нарушенных отношений с матерью, возможности компенсации последствий депривации социальных сирот в замещающей семье.

Разработанные теоретические положения могут быть использованы в лекционных курсах по психологии развития, возрастной и педагогической психологии. Полученные результаты экспериментально-психологического исследования могут быть учтены и использованы в воспитательной деятельности, в частности, в различных моделях замещающей семьи.

Достоверность и обоснованность теоретических и практических результатов обеспечены методологией, применением комплекса методик, адекватных целям исследования, продолжительностью и многоаспектностью психологических разработок, достаточным объемом обследованного контингента, анализом и обобщением фактического материала.

Диссертация состоит из введения, трех глав, выводов, методических и практических рекомендаций, списка использованной литературы и приложений.

По теме диссертации опубликовано 4 статьи.



05.02.2013

ՀՀ Ազգային գրադարան



NL1793076

